ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշատի 1

№ 5287-Ա « 26 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի
N 1355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 11-ի «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 1355-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝ «Շարլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ», «Երևանի Ավան համայնքի թիվ 1 գրադարան», «Թիվ 5 գրադարան», «Թիվ 6 գրադարան», «Թիվ 40 գրադարան», «Օքրո Օքրոյանի անվան թիվ 3 գրադարան», «Թիվ 10 գրադարան», «Թիվ 11 գրադարան», «Թիվ 25 գրադարան», ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի N 22 գրադարան, «Գրադարանային համակարգ», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Համո Սահյանի անվան գրադարան», «Թիվ 34 գրադարան», «Երևանի հ.16 գրադարան», «Երևանի Շ.Կուրղինյանի անվան հ.17 գրադարան», «Երևանի հ.18 գրադարան», «Երևանի հ.32 գրադարան» և «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի կենտրոնացված գրադարանային համալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվների NN 1-36 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-36 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ